ԿԻՐԱԿԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14

1908
ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14 № 276

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

Եփեմիա Գերասիմեան Փրիզօնեանց և Անանիա Գերասիմեան Հազարապետեանց խորին վշտով յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին իրանց սիրելի հղբօր՝

ԵԳՈՐ ԳԵՐԱՍԻՄԵԱՆ ԶՈՒՐԱԲԵԱՆՑԻ

մահվան մասին։ Հոգեհանդիստը՝ շաբաթ, երեկ. ժ. 6-ին։ Նեմէցկայա փ., տ. Երմօլովի № 6։ Յուղարկաւորութիւնը կիրակի, ամսիս 14-ին, առաւօտեան ժամը 10-ին, դէպի Վանքի մայր եկեղեցին։ Թաղումը Վանքի բակում։

3—3

Վարվառէ Զուրաբեան Վարդանեան՝ իր ամուսնու հետ, Սօֆիա Զուրաբեան Բուդուղեան՝ իր ամուսնու հետ և Գերասիմ Զուրաբեան Զոհրաբեանց՝ իր ամուսնու հետ ցաւով յայտնում են իրանց թանգագին հօրեղբայր

ԵԳՈՐ ԳԵՐԱՍԻՄԵԱՆ ԶՈՒՐԱԲԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ դեկտեմբերի 8-ին։
Հոգեհանդիստը՝ շաբաթ, երեկ. ժամը 6-ին։ Նեմէցկայա փող., տուն Երմօլովի № 6։ Յուղարկաւորութիւնը կիրակի, ամսիս 14-ին, առաւօտեան ժամը 10-ին, դէպի Վանքի մայր եկեղեցին։ Թաղումը Վանքի բակում։

3—3

ՄԻՆԱՍ ՍՈՂՈՄՈՆԵԱՆ ՍՈՒԼԽԱՆԵԱՆՑԸ իր ընտանիքով սրտի բուռն կսկիծով յայտնում է՝ «Զոհրաբեան-Սուլխանեանց» Առևտրական Տան անդամ՝ իր երկարամեայ գործակից թանգագին ընկեր՝

ԵԳՈՐ ԳԵՐԱՍԻՄԵԱՆ ԶՈՒՐԱԲԵԱՆՑԻ

մահը։ Յուղարկաւորութիւնը կիրակի, ամսիս 14-ին, ժամը 10-ին, հանգուցեալի ընակարանից (Նեմէցկայա փ., № 6) դէպի Վանքի մայր եկեղեցին։ Թաղումը Վանքի բակում։

2—2

Հայ թատրոնի 50-ամեակը բացւում տօնելու համար ներկայացում կազմակերպող

ՅՕԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

ՀՐԱՒԻՐՈՒՄ է ամենքին, ինչպէս հիմարկութիւններին, այնպէս և մասնաւոր անձերին, որոնք կը ցանկանային որևէ կերպ մասնակցել յօբելեանական հանդէսին, որը տեղի կունենայ Նիկիտինի թատրոն-ցիրկում։

ՀԻՆԳՇԱԲԹԻ, ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-ԻՆ,

վաղօրօք (ոչ ուշ՝ քան մինչև դեկտ. 15-ը) հաղորդել իրանց մասնակցութեան ձևի մասին Յօբելեանական Յանձնաժողովի նախագահ Պ. Մ. Կարա-Մուրզային («Нефтяного Дѣла»-ի խմբագրատուն—Նաւթարդիւնաբերողների Խորհրդի գրասենեակ)։

Յօբելեանական յանձնաժողովի կողմից՝ Ս. Մ. Աղամեան, Պ. Մ. Կարա-Մուրզա, Յ. Դ. Տէր-Գէորգեան

(կ.) (առ.) 1—1

Ուրբաթ, դեկտեմբերի 19-ին, երեկոյեան ժամը 7-ին
ԹԻՖԼԻՍԻ ԲՈՐՍԱՅԻՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ
Նշանակված է
Հայոց Դրամատիկական Ընկերութեան
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Զբաղմունքի առարկաներն են.
1) 1907/8 թատերաշրջանի հաշիվ քննութիւնը և հաստատութիւնը.
2) Տիկին Մակարեանի անուան և Կ. Ա. Մելիք-Այվազեանի նուէրի մրցանակաբաշխութեան ժիւրիի անդամների ընտրութիւնը.
3) Ընտրութիւն վարչութեան մի անդամի (պ. Ծուրինեանի փոխարէն) և մի փոխանդամի (պ. Աթաբէգեանի փոխարէն).
4) Ընտրութիւն 1908/9 թատերաշրջանի հաշիւները վերատուգող յանձնաժողովի անդամների.
5) Ընթացիկ հարցեր.

(կ. ե. ա.) (ա.) 3—1

Ա. Զ. Դ.
ԵՂԲ. ՅԱԿՈԲՋԱՆԵԱՆՆԵՐԻ ԵՒ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ
(Նիկոլայևսկի կամուրջի վրա, ՔԱՄՈՅԵՆԻ տանը № № 25—30)
Պատիւ ունի յայտնելու յարգելի գնողներին, որ, ի նկատի ունենալով Մոսկվայի իր սեփական ֆաբրիկայում պատրաստված ՄԵԾԱՔԱՆԱԿ ԱՊՐԱՆՔԸ ՄՕՏ 100,000 ՌՈՒԲԼՈՒ ԱՐԺՈՂ.—տղամարդկանց, կանանց, երեխաների և բոլոր հիմարկութիւնների պաշտօնական ՊԱՏՐԱՍՏԻ ԶԳԵՍՏՆԵՐ, և նոյնպէս՝ ի նկատի ունենալով ընդհանրապէս առևտրի կանգ առնելը, ԳԼԽԱՒՈՐ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ կարգադրութեամբ
Դեկտեմբերի 1-ից ս. թ. նշանակված է
խանութում գտնվող բոլոր ապրանքների համար—ձմերային և ամարային սեզոնի
ՄԻՆՉԵՒ ՕՐՍ ԹԻՖԼԻՍՈՒՄ ՉԵՂԱԾ
ՄԵԾ ԷԺԱՆ ՎԱՃԱՌՔ
(29, 2, 7, 11, 14, 17, 21, 23, 24 դ. 4 յուն.) առ. 10—5

Երկուշաբթի օրվանից դեկտեմբերի 15-ից
Հատավաճառ խանութում
Երկուշաբթի օրվանից դեկտեմբերի 15-ից
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ
„ԵՂԲ. Ա. ԵՒ Ա. ՄԻԼՕՎՆԵՐԻ“
Գօլովինսկի պր., Կադետսկի կօրպուսի դիմացը
ՀԻՆԳ ՕՐՎԱՅ ԸՆԹԱՑՔՈՒՄ
15-ին, 16-ին, 17-ին, 18-ին և 19-ին դեկտեմբերի ս. թ.
ՄԵԾ ԷԺԱՆ ՎԱՃԱՌՔ
ԲՈԼՈՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ
ԶՄԵՐԱՅԻՆ ՍԷԶՕՆԻՑ ՄՆԱՑԱԾ
Մետաքսէ և բրդէ կտորներ,
Տրիկօ կանանց կօստիւմի համար,
Աղլուխներ, վերմակներ և բուժազէյ,
Վարագոյրներ և պօրտիէրներ,
Քաթան սպիտակեղէնի համար,
Սփռոցներ և անձեռոցիկներ։
Տրիկօ տղամարդկանց համար—անգլիական և ռուսական ֆաբրիկաների
ԿՏՈՐՆԵՐՈՎ՝ կօստիւմի, ժիլէտի և վերարկուի համար։
Ընծայաբերութիւնների համար
Բրդէ հագուստեղէն կուպօններով և արդուզարդով
3 ՐՈՒԲ. 25 ԿՈՊ. ՍԿՍԱԾ
ԲՈԼՈՐ ԱՅԴ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ԿԸ ՎԱՃԱՌՎԵՆ
ԱՄԵՆԱԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ
Էժան վաճառքի ընթացքում
ՃԱՇԻ ԺԱՄԱՆԱԿ
խանութը փակ կը լինի ցերեկվայ ժամը 2-ից մինչև 4-ը։
(կ. ե. հ.) 3—1

ԵՂԲ. Ա. ԵՒ ԵԱ. ԱԼՃՎԱՆԳԻ
խանութում, Գօլովինսկի պրօսպեկտի վրա
ԼԻԿՎԻԴԱՑԻԱՅԻ ՊԱՏՃԱՌՈՎ
ՆՇԱՆԱԿՎԱԾ Է
ՎԵՐՋՆԱԿԱՆ ԷԺԱՆ ՎԱՃԱՌՔ
բոլոր ապրանքների համար
ԳՆԵՐԸ ՉԱՏԷԺԱՆԵՆ
Ծախվում է խանութի կահաւորութիւնը և խանութը տրվում է վարձով։
0—3

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Մ. Գ. Դանիէլ-Բէկ
Ընդունելութիւնը { Առաւօտեան 10—2 ժ. Երեկոյեան 4—6 ժ.
Հասցէ՝ Ртищевская ул., № 7.
(Ն. 2.) ա. 50—31

Ս. Պ. ԵԴԻԳԱՐԵԱՆՑԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵԼ Է
ԱՒՏՕՄՕԲԻԼԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՈՒԹԻՒՆԸ
ԹԻՖԼԻՍԻ ԵՒ ՍՂՆԱԽԻ ՄԻՋԵՒ
Թիֆլիսից և Սղնախից դուրս գալը ամեն օր, առաւօտեան ժամը 8-ին։ Տոմսակի գինն է 5 ռուբլի։ Տոմսակները տրվում, նոյնպէս և նրանց համար վաղօրօք տարարգրութիւններ վերցվում են Թիֆլիսում, բազմօնայա պօստին կից՝ գլխաւոր գրասենեակում, և Հալաթարում—Կախետինսկի հրապարակ, տ. Պօրալովի։ Սղնախում—պօստային կայարանում։

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

ԱՐՏԻՍՏԻԿ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ

Երկուշաբթի, դեկտեմբերի 15-ին

ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Հռչակաւոր դերասանուհի Տ. ՍԻՐԱՆՈՅՇԻ մասնակցութեամբ կը ներկայացնէ

ՀԱՄԼԷՏ

9 պատկ., Ցարգմ. Յով. Խան-Մասէհեանի

ՀԱՄԼԷՏԻ դերը կը կատարէ Տ. ՍԻՐԱՆՈՅՇԸ

Մասնակցում է ամբողջ խումբը

Սկիզբը ժամը 8-ին

Հայոց Դրամ. Ընկ. Բէժ. Սիրանոյշ

Երկուշաբթի, դեկտեմբերի 22-ին

ՕՐ. ԱԴԱՄԵԱՆԻ բենեֆիսը

Շաբաթ, դեկտեմբերի 27-ին

Հայ Տնայնագործական Ընկերութեան օգտին

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՆԵՐՈՒՄ

կը կայանայ

ՄԱՆԿԱԿԱՆ ՏՕՆ

I

Մանկական պարահանդէս զանազան տեսակի զգեստաւորված երեխաների, ուր կը պարեն՝

«ՄԻՆՈՒԷՏ»

Լիւդովիկոս XV-ի ժամանակի

«ՌՈՒՍԱԿԱՆ ՊԱՐ»

և «PIEROT»—պիէրօ

Բոլոր այս պարերը պարող երեխայք կը լինեն շքեղագէս զգեստաւորված արդի և ժամանակի ընտրող հանդերձներով։

II

ՍՆԷԳՈՒՐՕՉԿԱ ԾՆՆԴԵԱՆ ՊԱՊԻԿ

III

ՍԻՆԵՄԱՏՕԳՐԱՖ

Բացարձակապէս երեխայոց ըմբռնողութեան և ճաշակին մատչելի ծրագրով։

Մեծերի համար ժամը 10-ից յետոյ կը կայանայ

Կօտիլիօն Մօնստր

Երեկոյթի սրահներում կը կայանայ «ՊՏԻ-ՇՎՕ», նաև ՎԻՃԱԿԱԽԱՂ (որի բոլոր նօմէրներն էլ անխտիր կը տանեն)։

Օրիգինալ զգեստներ կրելը պարտադիր չէ։

Տոմսակները արժեն՝ մեծերի համար 2 ր. 20 կ., երեխաների համար 1 ր. 10 կ.։

Տոմսակները կարելի է ստանալ Սուզանճեանի մագազինում և Մասիսյի կօնդիտէրսկայայում։

Տոմսերի թիւը սահմանափակ է (14, 17, 21, 25, 27)

առ. 5—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Աւագների Խորհուրդը յայտնում է ի գիտութիւն պ. պ. անդամների, որ կիրակի, դեկտեմբերի 21-ին, երեկոյեան ժամը 9-ին նշանակված է

Ընդհանուր ժողով

քուէարկելու այն անձերին, որոնք առաջարկված են իբրև կանդիդատներ 1909 թ. համար։

(Կ.) 2—1

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Կիրակի, դեկտեմբերի 14-ին

ԵՕԳՈՒՏՍ

Հայ չքաւոր երեխաներին օգնող «ԼՈՅՍ» ընկերութեան դպրոցի

ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Կը ներկայացնէ

I

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Դրամա 3 գործ., հեղ. Շնիցլերի

Մասնակցում են օր. Ադամեան, տ. տ. Աբրաքս, Մելիքեան, պ. պ. Զարիֆեան, Մամիկոնեան և Սևումեան,

II

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Մասնակցում են տ. տ. Նաւասարդեան, Մայսուրեան, Սպէնդիարեան, օր. Օսլովեան, պ. պ. Բաժանակեան, Տրեգուբով,

ՋՈՒՐԱԿԱՀԱՆԴԷՍ ՊԱՅԵՎ

ՎԵՐՋԸ ՊԱՐԵՐ

Երաժշտական զինուորական խումբ, սազանդար, լոսարէյ-պլէգրի, petites chevaux, տանկական չադրա (սուրն)։

Տոմսակները 3 ր. 25 կ. մինչև 75 կ. ներկայացման օրը կարելի է ստանալ ժողովարանում։

Սկիզբը ճիշտ ժամը 8-ին

Հայ Դրամատիկական Ընկերութիւն

Բեժիսսեօր՝ Ս. ԲԱԳԱՆԱԿԵԱՆ

«ԼՈՅՍ» ընկերութեան վարչութիւն

(Կ.) առ. 1—1

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՐՑԱՊՆԴՄԱՆ ԱՌԻԹՈՎ

—

«Մշակի» № 271-ի առաջնորդողում մենք, խօսելով կովկասեան հարցապնդման առիթով, ասացինք, որ կարելի է զարմանալ՝ թէ որպիսի տգիտութիւն է թագաւորում մեր կովկասեան իրականութեան մասին այն մարդկանց շրջանում, որոնք արել են հարցապնդումը։

Մենք սպասում էինք հարցապնդման հեղինակների ապացոյցներին և պատճառաբանութիւններին։

Այժմ միայն մէկն է նրանցից հանդէս եկել—Պուրիշկեվիչը — ամենից աղմկարարը, ամենից անզուսպը, ամենից շատ սպառնալիքներ անողը։

Խօսել է և շատ երկար է խօսելնա։

Բայց ի՞նչ է խօսել։

Ըստ էութեան ոչինչ։ Նա հայհոյել է, ծաղրել է, զրպարտել է կովկասեան վարչական գործողներին, նա խեղաթիւրել է հասարակական հոսանքների և հիմնարկութիւնների բնաւորութիւնը. նա հարցապնդման պետական արժէքը ստորացրել է մինչև փողոցներում վխտացող ծաղրածուների ծամածռութիւնների աստիճանը։

Ոչ ոք չէ կարող այնքան վարկաբեկել կովկասեան հարցապնդման նշանակութիւնը, որքան այդ յանդուգն համարձակութեամբ արել է Պուրիշկեվիչը։ Եւ բանիմաց մարդկանց աչքում Պուրիշկեվիչը թաղել է փառաւորապէս հարցապնդումը և մահվան դատավճիռներ կարդացել այն դրդումների վրա, որոնց շնորհիւ հանդէս է եկել ինքը հարցապնդումը։

Դէպի Պետական Դուման ունեցած մեր յարգանքը թելադրում է մեզ յուսալ, որ հարցապնդման միւս հեղինակները, աշակողմեան միւս հռետորները, կը չանան ներկայացնել աւելի պատճառաբանված առարկութիւններ հարցապնդման էութիւնը ապացուցելու կամ պաշտպանելու համար։

Մենք հաւատացած ենք, որ նրանց չանքերը կը ծնան միայն չանքեր, առանց էական բովանդակութեան. բայց կարող էին ծառայել իբրև միջոցներ և առիթներ կովկասցիների համար հերքելու այն մոլորութիւնները և զրպարտութիւնները, որոնք տարածվում են որոշ խմբերի կողմից կովկասի և կովկասցիների մասին զանազան շրջաններում։

Մենք դարձեալ կը սպասենք մի քանի օր՝ ծանօթանալու Պետական Դումայի հռետորների ճառերի հետ, և եթէ կը գտնենք էական կէտեր նրանց մէջ, կը յայտնենք մեր խորհրդածութիւնները նրանց առիթով։

Ա. Քալանթար

ՊԷՏՔ Է ՇՏԱՊԵԼ

—

Իզմիրլեան պարիարքի շրջաբերական կոչը, որ տպվեց «Մշակի» երէկվայ համարում, որով նա դիմում է բովանդակ հայութեան՝ փութալ եղբայրական օգնութեան ձեռք կարկառելու Հայաստանի և Կիլիկիայի սովատանջ հայերին, մի անգամ ևս ստիպում է մեզ յորդորել Ռուսաստանի հայ ազգաբնակութիւնը՝ արձագանք տալու հայրապետական այդ կոչին։ Քանի որ Թիֆլիսում հաստատված կայ մի օրինաւոր Հանգանակիչ Մասնաժողով, որ արդէն գործի գլուխ է անցել, թող ամեն մի հայաբնակ քաղաքում կազմակերպվեն հանգանակութիւններ և հասցնեն այդ Մասնաժողովին, որ անմիջապէս կը փոխադրէ նուէրներն Իզմիրլեան պարիարքին, բաժանելու ամենակարօտեալ վայրերի ժողովրդին։

Պէտք չը կայ անպատճառ սպասել, որ նախ հարուստները մեծ գումարներ նուիրեն. ոչ. ինչպէս ծովը բաղկացած է կաթիլներից, նոյնպէս և նուէրների մի ամբողջ ծով կարող է կազմվել լումաներից, կօպէկներից։ Թող միայն ամեն մի հայ իր մարդկային և ազգային պարտականութիւնը համարէ իր լուման, իր կօպէկը տալու։

Եւ Իզմիրլեան պարիարքը, իբրև հայը հասարակաց, իր կոչը ուղղում է անխտիր ամենին, վաճառական թէ խանութպան, արհեստաւոր թէ մշակ, հարուստ թէ աղքատ, որ ամեն մինը իր զգայմունքի և կարողութեան չափով ընծայէ իր ձեռնտուութիւնը։

Մի՞թէ Իզմիրլեանի՝ հայրապետական ազդեցիկ կոչն ևս արձագանք չը պէտք է գտնէ հայերի սրտում։

Թող շարժվեն Թիֆլիսը, Բագուն, հայ գաղութները՝ Նոր-Նախիջևանի, Մոսկվայի, Աստրախանի. թող եռանդուն այժեր հանգանակութեան գործի գլուխ անցնեն և կօպէկներ, ռուբլիներ տեղացնեն Հանգանակիչ Մասնաժողովին, որ ևս ևս յանուն Ռուսաստանի բովանդակ հայութեան կարողանայ պատասխանել արժանավայել կերպով Իզմիրլեան պարիարքի կոչին։

Շտապեցէք, կուշտեր. ձեր եղբայրները այնտեղ՝ Հայաստանում, Զէյթունում սովից մեռնում են, սովալուկ տանջվում են։

Շտապեցէք, սթափվեցէք մի րօպէ ձեր առօրեայ հոգսերից, թափ տուէք ձեր զգայմունքները, բացէք ձեր կրեկից սրտերը։

Հ. Առաքելեան

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

—

Կ. Պոլիս, 11 դեկտեմբերի

Ընտրված են նախագահութեան թեկնածուներ 211 ձայներով Անվէդ-Բիզաբէյ, Կըրք-քիլիսէյի պատգամաւորը՝ 134 ձայնով. բոլոր թեկնածուները մահմեդականներ են, և երիտասարդթիւրքեր։ Վաղը լինելու են ընտրութիւններ փոխ-նախագահութեան պաշտօնի համար վեց թեկնածուների և այն յանձնաժողովի, որը պէտք է ներկայացնի սուլթանին թեկնածուական ցուցակներ հաստատելու համար պրէզիդիումի ընտրվածների միջից։

(«Հ. Գ.»)

—

Կ. Պոլիս, 11 դեկտեմբերի

Պարլամենտը, Նէքքի-էֆէնդիի նախագահութեամբ, ձեռնարկեց փոխ-նախագահութեան համար վեց կանդիդատների ընտրութեանը։ («Հ. Գ.»)

—

Կ. Պոլիս, 11 դեկտեմբերի

Փոխ-նախագահի թեկնածու է ընտրված առ այժմ Տալուտ-բէյ, Ադրիանուպօլսի պատգամաւորը, 116 ձայնով 207-ից. մնացածները մեծամասնութիւն չը ստացան։ Կրկնաքուէարկութիւն է կատարվում։ («Հ. Գ.»)

—

Կ. Պոլիս, 12 դեկտեմբերի

Առաջ բերելով ռուսական նօտան, «Իկդամը» մատնանշում է, որ Ռուսաստանը շարունակում է պաշտպանել Թիւրքիային։ Աւստրիայի վարմունքը բանակցութիւնների ժամանակ անկեղծ չէր. Աւստրիան յոյս ունի, թէ Քեամիլ-փաշայի կաբինէաը կընկնի և այժմեան մեծ վէզիրին կը փոխարինէ մի անձն, որ աւելի զիջող կը լինի։

«Շուրայի-Իւմմէտը կանգնած լինելով միենոյն տեսակէտի վրա, պահանջում է, որ Աւստրիան պարզ ձևակերպէ այն առաջարկութիւնները, որոնք կարող էին ընդունվել Թիւրքիայի կողմից։

Պատգամաւորների պալատը վերջացրեց առաջին փոխ-նախագահի երեք թեկնածուների ընտրութիւնները միայն։ («Հ. Գ.»)

—

Կ. Պոլիս, 12 դեկտեմբերի

Թիւրքական մամուլը խիստ կերպով պարսաւում է յունաց թագաւորին այնպիսի խօսքեր արտասանելու համար, որոնցով յոյս է յայտնվում շուտով կրետէցիների ներկայացուցիչներին տեսնել յունական պալատում։

(«Հ. Գ.»)

—

Կ. Պոլիս, 11 դեկտեմբերի

Ի նկատի ունենալով զանազան լուրերը աւստրօ-ունգարական բանակցութիւնների մասին՝ վստահելի աղբիւրներից հաղորդում են, որ մինչև այժմս դեռ չէ մշակված բանակցութիւնների հիմքն անգամ։ Կողմերի հայեացքները այնքան տարբերվում են, որ ամեն ենթադրութիւն վաղաժամ է։ («Հ. Գ.»)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

—

Թաւրիզից դեկտեմբերի 8-ին գրված մի մասնաւոր նամակից տեղեկանում ենք, որ զօրքերով Թաւրիզի վրա արշաւելու պատրաստվող Սամադ խանը ռումբով սպանված է Մարաղայում յեղափոխականների ձեռքով։

Նոյն աղբիւրից տեղեկանում ենք այն ևս, որ Թաւրիզի ֆէդայիների ու դաշնակցականների միջև, ինչ որ թիւրիմացութեան պատճառով, սառնութիւն է ընկել։ L.

—

Լօնդոն, 11 դեկտեմբերի

Բէյտերին Թէհրանից հեռագրում են, որ ի պատասխան անգլիական և ռուսական միսսիաների առաջադրութիւններին շահը կրկին յայտնեց, թէ ինքը կատարելու է իր խոստումները և պատրաստ էր իրագործել նրանց, բայց ժողովուրդը փորձ արեց ոյժով հարկադրելու իրան այդ բանն անել, գընալով թիւրքական դեսպանատունը։ Շահը հրովարտակ չի հրատարակի նոր ընտրութիւնների մասին, մինչև փախստականները չը հեռանան դեսպանատնից։ Բոլոր կարգադրութիւններից երևում է, որ իշխանութիւնները քիչ նշանակութիւն են տալիս այդ շարժմանը։ («Հ. Գ.»)

—

Թէհրան, 11 դեկտեմբերի

Թիւրքական դեսպանատանը բաստ նստած նացիոնալիստների թիւը մի փոքր պակասեց։ Բացի ռուսաց և անգլիական միսսիաների անհամակրութեան, բաստին խանգարում են թիւրքական դեսպանութեան շուրջը զետեղված ժանդարմները, որոնք արգելում են, որ կենսական մթերքներ բերվեն բաստ, և չեն թողնում ամբոխին մօտենալ բաստին։ Աւստրիական միսսիայում բաստ են նստած 10 վաճառականներ։ Դեկտեմբերի 10-ին շուկայում փակված է մի քարվանսարայ։ («Հ. Գ.»)

—

Բերլին, 11 դեկտեմբերի

Վոլֆին հաղորդում են Թէհրանից, որ զերմանական դեսպանը ընդունեց այն նացիոնալիստների պատգամաւորութիւնը, որոնք ապաստանել էին Թիւրքական դեսպանութեան մէջ, և յայտնեց նրան, որ չէ կարող թոյլ տալ նացիոնալիստներին հաւաքվել միսսիայի տերիտորիայի վրա, որովհետև չէ կարող թոյլ տալ, որ դեսպանատունը ծառայեցնեն զուտ քաղաքական ցոյց անելու նպատակին. խորհուրդ տուեց նացիոնալիստներին ցրվել տները, երբ նրանք վստահութիւն կունենան, որ իշխանութիւնները չեն հալածի նրանց։ Աւստրօ-ունգարական դեսպանը վարձեց մի տուն հողի տարածութեամբ նրա համար, որ հարկաւոր դէպքում կարողանայ ապաստան տալ ցուցարարներին։ («Հ. Գ.»)

—

Թաւրիզ, 11 դեկտեմբերի

Դեկտեմբերի 10-ին Էյն-ուդ-Դովլէի բանակն եկան էլի 300 զարադաղցի ձիաւորներ, որոնք գետեղվեցին գիւղերում Դեռգանի մօտ։ Կառավարչական ձիաւորների հետ ընդհարման ժամանակ սպանվեց կովկասեան գլխաւոր յեղափոխականներից մէկը՝ Կագնիեվ։

(«Հ. Գ.»)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Հանգանակիչ Մասնաժողովը ի նպաստ Թիւրքական Հայաստանի հայ տառապեալների ամսիս 12-ին կայացած իր նիստում որոշել է անմիջապէս փոխադրել Կ. Պոլիս Իզմիրլեան պարիարքին 3000 ֆրանկ՝ Հայաստանի կամ Զէյթունի սովեալներին բաժանելու համար։

Մասնաժողովը վերջնականապէս որոշել է սովի մասին ճշգրիտ տեղեկութիւններ հաւաքելու գործը շուտով իրագործել։

—

Պետերբուրգ, 12 դեկտեմբերի

Երէկ երեկոյեան շարունակվեց կովկասեան հարցապնդումի քննութիւնը։

Պուրիշկեվիչը երկու ժամ շարունակ մեղադրում է հայերին և վրացիներին սեպարատիզմի մէջ։

Հայերը կազմեցին Մեծ-Հայաստանի քարտէզը մինչև Վօրօնէժի նահանգը. այդ քարտէզը տեսել էր հանգուցեալ հոգաբարձու Եանովսկին։ Բագուի Կուլտուրական Միութիւնը, գլուխ ունենալով յայտնի յեղափոխական ինժենէր Խատիսեանին, փոխարինում է կառավարութեան. ժողովել են ահագին գումարներ. կառավարութիւնը բաց թողեց 50 հազար ռուբլի նպաստ. միութիւնը իր ուսումնարաններում ընդունում է թուրք մանուկների։

Վրաց հոգևորականութիւնը բացէ ի բաց պահանջում է աւտօկէֆալութիւն. Վրաստանի էկզարխ Նիկոն արքեպիսկոպոսը սպանվեց վրաց գործադիր կոմիտէի ձեռքով։

Կովկասում Ռուսաստանի բարեկամներ հանդիսանում են բացառապէս մահմեդականները։

Փոխարքան, արդէն զառամած, շրջապատված է կաշառակերներով։

Խորապէս յուզված, բարոն Նոլդէն յայտնում է, որ Բեսարաբիայի պատգամաւորը արժանի չէ նրանց կօշիկների կապերը քանդել, որոնց նա զբաղվում է։

Ընդմիջումից յետոյ բարոն Նոլդէն Պ. Դումայից ներողութիւն է խնդրում, բացատրելով որ նրա խօսքերը վերաբերում էին բացառապէս Պուրիշկեվիչին։

Շուլգինը կենտրոնի և աջակողմեանների անունից առաջարկում է իբրև բողոք՝ հասցրած վիրաւորանքի՝ նիստը փակել։

Առաջարկութիւնը ընդունվում է։

(«Т. Л.»)

—

Վիեննա, 11 դեկտեմբերի

Լրագիրները տպեցին այն շրջաբերական յայտագրի բովանդակութիւնը, որ դեկտեմբերի 10-ին հաղորդեց մեր դեսպանութիւնը։ «Neue Freie Presse» այդ յայտագիրը անուանում է պօլէմիկական յօդուած աւստրօ-ունգարական քաղաքականութեան դէմ։ Ռուսաստանի ցանկացած ճիշտ որոշումը Բոսնիայի նոր դրութեան՝ Հռոմի դաշնագրի 25-դ յօդուածի դէմ համարվում է ինքնավարութեան պահանջ ինքը յայտագիրը համարվում է գրաւոր հրաժարում կօնֆէրէնցիայից, որովհետև Աւստրիան չէ կարող ժամանակցել կօնֆէրէնցիային այդպիսի հիմքերով։—«Zeit» շատ խիստ լեզուով է խօսում յայտագրի մասին։—«Wiener Alg. Zeit.» ծննդեան տօների անախորժ ընծայ է անուանում յայտագիրը։ («Հ. Գ.»)

—

Բերլին, 11 դեկտեմբերի

Այստեղ տաք վիճաբանութեան առարկայ է մինիստր Իզվոլսկու յայտագիրը։ Ընդհանուր կարծիքով նրա մէջ առանձին բարեկամական վերաբերմունք չէ նկատվում դէպի Աւստրիան։ «Local Anz.» ասում է, որ Իզվոլսկին շատ.էլ խաղաղասէր ծննդեան ընծայ չը տուեց Եւրոպային։ Իր ձևով յայտագիրը զուրկ չէ մի որոշ խաղաղասէր բնոյթից, բայց նրա բովանդակութիւնը տեղ-տեղ կրում է անհաշտ վերաբերմունքի կնիքը։ «Ber. Zeit.» կարծում է, որ Ռուսաստանի սակաւ բարեկամական վերաբերմունքը դէպի Աւստրօ-Ունգարիան կարող է մի փոքր պակասեցնել արևելեան ճգնաժամը շուտով լուծելու յոյսը։ «Vossiche Zeit.» նկատում է, որ դրութիւնը ամենևին աւելի ախորժելի չէ դարձել, և խորհուրդ է տալիս Աւստրիային ազատվել Թիւրքիայի պահանջներից մի քանի միլիոններ, մինչև անգամ տասնեակ միլիոններ վճարելով նրան։ Դա այժմ նրա համար ամենախելացի բանը կը լինէր, երբ նրան ճնշում են ամեն կողմից։ («Հ. Գ.»)

—

Պարիզ, 11 դեկտեմբերի

Ֆրանսիական մամուլը զսպված լեզուով է քննում ռուսական յայտագիրը։ «Temps» լրագիրը անպայման կանոնաւոր է համարում մինիստր Իզվոլսկու հիմնական թէզիսը պետութիւնների ստորագրած դաշնագրի փոփոխութեան հնարաւորութեան մասին նրանց համաձայնութեամբ, բայց փաստական պատճառաբանութիւնը թոյլ է համարում, որովհետև Ռուսաստանը, ի նկատի ունենալով Ռէյխշտատում կայացրած համաձայնութիւնը, մի այլ պետութիւնից աւելի քիչ իրաւունք ունի պաշտպանել դաշնագիրը։

(«Հ. Գ.»)

—

Պարիզ, 12 դեկտեմբերի

Պատգամաւորների պալատը ընդունեց արտիլէրիան վերակազմելու օրէնքը։ («Հ. Գ.»)

—

Պարիզ, 12 դեկտեմբերի

Առաւօտեան Ֆալիէրը իր քարտուղարի և ադիւտանտի ուղեկցութեամբ դուրս եկաւ զբօսնելու։ Պլաս դ'Էտուալում սրճարանի սպասաւոր ոմն Մատտի յարձակվեց նախագահի վրա, բռնեց նրա պարանոցից, բայց քարտուղարը և ադիւտանտը խլեցին նրան։ («Հ. Գ.»)

—

Պարիզ, 12 դեկտեմբերի

Սենատը և պատգամաւորների պալատը երէկ վերջնականապէս ընդունեցին բիւջէն։

Պարլամենտի նիստերը յետաձգվեցին մինչև դեկտեմբերի 30-ը։

(«Հ. Գ.»)

—

Պարիզ, 12 դեկտեմբերի

«Action» լրագիրը ձևակերպելով այն տարակուսանքը, որ ստացվել է քաղաքական շրջաններում ռուսական նօտայի մասին «Temps»-ի գրած յօդուածից, ցաւ է յայտնում, որ Ֆրանսիայում գտնվեց մի ձայն, որ աշխատում է նուազեցնել Իզվոլսկու հեղինակութիւնը այն րօպէին, երբ նա հանդէս է գալիս ի պաշտպանութիւն արդարացի գործի։

«Siecle»-ը ընդգծելով ռուսական նօտայում պաշտպանված սկզբունքների ճշմարտութիւնը, ցոյց է տալիս, որ «modus procedendi»-ն չէ շօշափում ապագայ կօնֆերէնցիայի վճիռների ազատութիւնը։

«Radical»-ը և «Petit Parisien»-ը գտնում են, որ ռուսական նօտան չէ պակասեցնում քաղաքական կացութեան անարդարացի լինելը։ («Հ. Գ.»)

—

Լիսաբոն, 12 դեկտեմբերի

Ադիվէկոն վերժեց նոր կաբինէտ կազմելու առաջարկութիւնը։ Թագաւորը նոյն առաջարկութեամբ դիմեց ծովակալ Սեբաստինօ Տէլլէսին, որ նախկին կաբինէտի մէջ զինուորական մինիստրի պօրտֆէլն ունէր։

(«Հ. Գ.»)

—

Վիեննա, 11 դեկտեմբերի

Կառավարչական շրջաններում Բոսնիային աւտօնոմիա տալու համար Իզվոլսկու յայտնած պահանջի մէջ նկատում են բանակցութիւնների նոր բարդութիւններ, որոնք երկիւղ են ներշնչում, որ խաղաղութիւնը կարող է խախտվել։ («Kc.»)

—

Բելգրադ, 11 դեկտեմբերի

Ամերիկայի Միացեալ-Նահանգների նոր նախագահի կինը՝ Ելենա Տաֆթը սերբական ողորմած քոյրերի ընկերութեան անդամ է գրվել։ («Kc.»)

—

Բելգրադ, 11 դեկտեմբերի

Զինուորական մինիստրը ներկայացրեց սկուպշչինային մի օրինագիծ 7

միլիոն դինարի երկրորդ լրացուցիչ կրեդիտի մասին։ Սկուպշտինան ընդունեց օրինագծի անյետաձգելիութիւնը։ («Հ. Գ.»)

—

Բերլին, 11 դեկտեմբերի

«Berl. Tag.»ը հեռագրում են Սոֆիայից, որ բուլգարական կառավարութիւնը պաշտօնապէս յայտնել է մեծ պետութիւնների ներկայացուցիչներին, որնա հարկադրված է թիւրք կառավարութեան բռնած դիրքի մէջ Բուլգարիայի նկատմամբ տեսնել որոշ գործողութեան դիմելու նպատակով ժամանակ վատակելու ցանկութիւն։

Բացի դրանից բուլգարական կառավարութիւնը զարմացած է թիւրքական պարլամենտի բացման առիթով արտասանված գահական ճառի մէջ Բուլգարիայի ու Ֆերդինանդ թագաւորի հասցէին գործածած խօսքերից։ Այդ պատճառով բուլգարական կառավարութիւնը իրանից հեռացնում է ապագայում ծագելիք հաւանական բարդութիւնների պատասխանատուութիւնը և խնդրում է պետութիւններին անյապաղ միջոցներ ձեռք առնել լուրջ բարդութիւնների առաջն առնելու համար։ («Б. В.»)

—

Լօնդոն, 12 դեկտեմբերի

«Daily Telegraph»ը ասում է, թէ պէտք է հաւատացած լինել, որ արտաքին գործերի մինիստրութիւնը հաշուի կառնէ ռուսական նոտան, թէև Գրէյը հաւանօրէն Իզվոլսկու հետ միասին ցաւում է՝ նոտայով պայմանաւորված այն դանդաղկոտութեան և երկիւղի շարունակութեան մասին, որ առաջ եկաւ Աւստրիայի և փոքրիկ հարևանների լարված յարաբերութիւններից։ Կարևոր է, որպէսզի ոչ մի թիւրիմացութիւն չը լինի Անգլիայի դիրքի վերաբերութեամբ, որպիսին ներկայանում է նաև Ֆրանսիայի ու Ռուսաստանի դիրքը։ Անգլիան չի ստորագրի միջազգային մի համաձայնութիւն, որ համապատասխան չի լինի Բերլինեան դաշնագրութեան պայմաններին, այսինքն այն պայմաններին, որոնց համաձայն չէ Թիւրքիան։

(«Հ. Գ.»)

ՅՕԳՈՒՏ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ

(Հեռագրով)

—

Օդէսա, 12 դեկտեմբերի

Փոխանակ պսակ դնելու Եգօր Գեբասիմօվիչ Զոհրաբեանի դագաղի վրա, խնդրում եմ ընդունել մի հարիւր ռուբլի յօգուտ Թիւրքիայի հայ սովեալների։

Սողոմոն Սուլթանեանց

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՐՑԱՊՆԴՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅՈՒՄ

(Հեռագրով)

Դեկտեմբերի 11-ի երեկոյեան նիստի շարունակութիւնը

Պուրիշկեվիչ։ Խօսելուց յետոյ բարօն Նօլդէն.—Ինձ պարտաւորված եմ համարում բողոքել այն զրպարտութիւնների դէմ, որ թոյլ տուեց անել Բեսսարաբիայի նահանգի ներկայացուցիչը (ծափահարութիւն ձախակողմում)։ Նա թոյլ տուեց իրան անյարգանքով վերաբերվել Նորին Մեծութեան Կովկասի Փոխարքային, մի մարդու, որ անգին յարգանք է վայելում իր բոլոր ճանաչողների կողմից։ Նա թոյլ տուեց իրան զրպարտել այն մարդկանց, որոնց կօշկի կապերը քակելու արժանի չէ (ծափահարութիւն ձախակողմում, աղմուկ աջակողմում. ձայներ սրանցից՝ «սուտ է, սուտ է»)։

Պուրիշկեվիչը ինչ որ աղաղակում է բարօն Նօլդէին։

Նախագահ.—Խոնարհաբար խնդրում եմ տեղներդ գրաւել։ Նիստը շարունակվում է։ Խոնարհաբար խնդրում եմ չաղմկել և տեղերդ գրաւել։ (Ուժեղ աղմուկ)։ Այստեղ չէ կարելի աղմկել։

Ձայներ.—Ընդմիջում։

Նախագահ.—Ընդմիջումը ես կը յայտարարեմ, բայց ոչ ձեր ասելով։ (Երկարատև ծափահարութիւն կենտրօնում և ձախակողմում)։ Բարի եղէք չաղմկել։

Զխէիձէն ընդգծելով այն հանգամանքը, որ Պուրիշկեվիչը միանգամայն անգիտակ է Կովկասին, կարծում է, որ Կովկասի վարչութիւնը արդէն այնքան էլ վատ չէ, ինչպէս ասաց Փոխարքայի ներկայացուցիչը։ հարցապնդումի հեղինակներին հեռաքշել է ինչպէս կենտրօնի, այնպէս և ծայրերկիրների վերաբերութեամբ ոչ թէ կուլտուրական, ոչ թէ ստեղծագործական աշխատանքը, այլ սահմանադրական քաղաքականութիւնը և այդ քաղաքականութեան աջողութիւնները։

«Հարցապնդումի հեղինակները չեն կարող հանդիսատես մնալ, քանի Կովկասը, բոլոր լաւագոյն ռուս մարդկանցից սիրված և ներքողված Կովկասը դեռ չէ փոխվել գերեզմանի, որի վրա նրանք կարողանային իրանց սև-հարիւրեակային մեռելահացը կատարել անարգել։... (ծափահարութիւն ձախակողմում)։ Հարցապնդումը իր ամեն մի խօսքով ձգտում է սոսկ մի նպատակի՝ վարկաբեկելու կոմս Վօրոնցօվ-Դաշկովի անձնաւորութիւնը։ Ես կարծում եմ, որ ոչ ոք ձեզանից չի կասկածի (ծիծաղ աջակողմում), որ մենք հանդէս ենք գալիս ի պաշտպանութիւն Վօրոնցօվ-Դաշկովի անձնաւորութեան։ Իսկ ինչու՞ իսկական ռուս մարդիկ յարձակվում են Վօրոնցօվ-Դաշկովի անձնաւորութեան վրա։ Դա շատ հասկանալի է։ Երբ նրանք կամենում են ազատակային ազահութեամբ յարձակվել իրանց որսի վրա և լափել նրան, Վօրոնցօվ-Դաշկովը իր գործը տեսնում է կոմսերին, իշխանուհիներին վայել ջենտլմէնութեամբ (աղաղակներ աջակողմից՝ «ընդ՞, այ»)։ Երբ նրանք կամենում են, որպէսզի Կովկասի կառավարիչը զուտ 96 պրօբի Հերովդէս լինի, կոմսը երբեմն չէ մերժում Պօնտացի Պիղատոս դառնալ...

«Եթէ դուք սեպարատիզմի տակ հասկանում էք ամենաղոյզն բողոք անսահման կամայականութեան և բռնութեան դէմ, ես, յիրաւի, հաստատում եմ, որ այդպիսի սեպարատիզմ իսկապէս գոյութիւն ունի Կովկասում։ Եթէ դուք սեպարատիզմի տակ հասկանում էք այն, իբր Կովկասեան ազգաբնակութեան ցանկութիւնն է առանձին ու անջատ ձգտել ազատագրական շարժման առաջադրած խնդիրները իրագործելու, ես պէտք է վկայեմ, որ Կովկասեան ազգաբնակութեան գիտակցութիւնը՝ թէ այդ խնդիրների իրականացման գործում անհրաժեշտ է համերաշխութեամբ ընթանալ ռուս ազգաբնակութեան հետ ձեռք-ձեռքի տուած, երբէք չէ խախտվել։ Ես կարծում եմ, որ մենք վայելում ենք ոչ միայն վրացական, այլ և ռուսական պրոլետարիատի համակրանքն ու վստահութիւնը»։

Նախագահը խնդրում է բուն հարցից չը շեղվել։

Զխէիձէն շարունակում է. «Արդարև, տերրորիստական գործողութիւններ կատարվել են Կովկասում, բայց հէնց ինքը փաստը, անգամ այն սպանութիւնները, որոնք մեկնվում են անկախ այն պայմաններից, որոնց գոյութեամբ այդ փաստը կատարվում է, ոչինչ չէ ասում, ոչինչ չէ բացատրում։ Երբ դուք խօսում էք մարդասպանների և ջարդարարների մասին, աչքի առաջ ունէք, արդեօք, այն մարդասպաններին և ջարդարարներին, որոնք մեծ բաղմութեամբ վխտում են «Կովկասի ռուսաց հայրենասիրական ընկերութիւն» կոչված յանցաւոր կազմակերպութեան մէջ... (ծափահարութիւն ձախակողմում)։ Այդ մասին հարցապնդումի հեղինակները լռում են»։

Ապա հռետորը, ընդունելով Կովկասի անհօրմալ կացութիւնը, բացատրում է այդ երկրի պակասաւոր տնտեսական իրաւական դրութեամբ։

Ժամը 11 և 15 րօպէին յայտարարվում է ընդմիջում։

Նիստը վերսկսվում է 30 րօպէից յետոյ։

Բարօն Նօլդ.—Զայրոյթի պոռոկումով, որ երևաց իմ մէջ Դումայի անդամ Պուրիշկեվիչի ճառից յետոյ, ես գործածեցի այնպիսի դարձուածքներ, որոնք ըստ երևոյթին սխալ հասկացվեցին։ Այդ դարձուածքները բացառապէս հետևանք էին այն մի շարք անիրաւացի մեղադրանքների, որ բարդեց Պուրիշկեվիչը այստեղ ներկայ չը գտնվող մարդկանց վրա։ Բայց իմ մտքովս էլ չանցաւ որևէ կերպով անյարգանք վերաբերվել դէպի Դուման, որի առաջ բացատրութիւններ տալը ես ինձ համար մեծ պատիւ եմ համարում (ծափահարութիւն ձախակողմում, աղմուկ և ձայներ աջակողմից՝ «սա նոր վիրաւորանք է»)։

Նախագահը զանգահարում և խնդրում է հանգստանալ, հակառակ դէպքում նստիպված կը լինի նիստը փակել։

Զխէիձէն շարունակելով իր ճառը և մանրամասն կրկնելով ստենոգրամում բարօն Նօլդէի ասածները՝ ներկայացնում է հետևեալ պատճառաբանեալ առաջարկութիւնը.—Նիստը դադարեցնել, գտնելով, նախ, որ բարօն Նօլդէի վերոյիշեալ խօսքերը իրանց մէջ պարունակում են անպայման վիրաւորանք Դումայի հասցէին, և երկրորդ, որ այդ վիրաւորանքը բղխում է կառավարութեան ներկայացուցչից, այսինքն այն անձից, որ Դումայի նախագահի անձնական իշխանութեան նկատմամբ դրված է յատուկ դրութեան մէջ. Դուման բողոքում է իր անդամներից մէկին իշխանութեան ներկայացուցչի կողմից վիրաւորանք հասցնելու դէմ և խնդրում է Դումայի նախագահին փակել այսօրվայ նիստը (ծափահարութիւն)։

Նախագահ.—Առաջ քան նիստը փակելը, ես պէտք է զեկուցանեմ, որ ինձ համար չափազանց ծանր էր կատարել այսօր Դումայի նախագահի պարտականութիւնները։ Դումայի արժանապատուութիւնը ամենից առաջ ինքը Դուման պէտք է արդարացնէ (ծափահարութիւն)։ Դժբաղդաբար, միշտ չէ լինում դա։ Այսօր ես դժբաղդութիւն ունեցայ այս ամբիոնից և զանազան կողմերից այնպիսի բացագանչութիւններ լսել, որպիսիները իմ պարտականութիւնը կը համարեմ դուրս ձգել ստենոգրամից, որովհետև իմ խիղճս ինձ թոյլ չի տայ նրանց երևան հանել մամուլով։ Այդօրինակ պայմաններում, պարոններ, շատ դժուար է զսպված մնալ, և ամենախոնարհաբար խնդրում եմ, ի պահպանութիւն Դումայի, այսուհետև մարդկանց մեղքի մէջ չը ձգել, ձեզ աւելի համեստ պահէք, աւելի զսպված լինէք, քան այդ լինում է շատ յաճախ այս համակրելի պատերի մէջ։ Մենք դրանով կը պահպանենք Դումայի արժանապատուութիւնը և չենք խանգարի կարգ ու կանոնը. կրկնում եմ, մարդկանց մեղքի մէջ չը ձգենք, որի մէջ ընկնում են նրանք երբեմն մեր անզգուշականութեան շնորհիւ։ Ցաւատարում եմ նիստը փակված»։

Նիստը փակ է ժամը 12 և 5 րօպէին։

(«Հ. Գ.»)

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Հեռագրով)

—

Պետերբուրգ, 12 դեկտեմբերի

31-րդ նիստը բացվում է առաւօտեան ժամը 11 և 18 րօպէին։

Նախագահում է Խօմեակովը։

Մինիստրների օթեակումն են մինիստրների խորհրդի նախագահը, ֆինանսների, արտաքին գործերի, արդարադատութեան, ծովային, ճանապարհների հաղորդակցութեան, առևտրի մինիստրները, երկրագործութեան գլխաւոր կառավարիչը, զինուորական մինիստրի օգնական գեն.-լեյտ. Պոլիվանովը և մինիստրների օգնականները։

Դիպլոմատիական օթեակում նստած են Եապօնիայի, Իտալիայի, Թիւրքիայի, Բուլգարիայի, Շվէդիայի, Ֆրանսիայի, Չինաստանի, Սերբիայի, Անգլիայի, Պորտուգալիայի, Սպանիայի, Պարսկաստանի, Գերմանիայի և Աւստրօ-Ունգարիայի կառավարութիւնների ներկայացուցիչները։ Պետական Խորհրդի անդամները և սենատորները գրաւում են իրանց տեղերը։

Հասարակութեան համար յատկացված տեղերը բոլորովին լի են։

Հերթին դրված է բիւջէտային մասնաժողովի զեկուցումը արտաքին գործերի մինիստրութեան նախահաշուի մասին։

Գօսնովի հակիրճ զեկուցումից յետոյ հանդէս է գալիս արտաքին գործերի մինիստր Իզվոլսկին։

Դահլիճում բուռն ծափեր։ Դուման ոտքի է կանգնում։

Զսպված բացագանչութիւններ. «Ճիշտ է, ճիշտ է. կանոնաւոր է, բրաւօ»։ Ժամանակ առ ժամանակ ընդհատում են մինիստրի ճառը։

Դումայի կենտրոնը և օպոզիցիայի մի մասը ողջունում են երկարատև ծափահարութիւններով, աջակողմեանները սուլում են, ծայրայեղ ձախակողմեանները լուռ են։

Մինիստրի ճառից յետոյ, ժամը 3-ին, յայտարարվում է ընդմիջում։

Մինիստրի ճառը տրվում է պաշտօնական հրահանգագրով առանձին։

(«Հ. Գ.»)

«ԱՂԲԻՒՐԻ» 25-ԱՄԵԱԿԸ

—

✦ Ալէքսանդրօպոլի 8 ուսուցիչների ուսուցչական խմբերը դեկտ. 9-ին, ժողով գումարելով, որոշել են տօնել «Աղբիւրի» 25-ամեակը արտակարգ ծրագրով։ Պատրաստվում է ներկայացում։

✦ Բաթումի հայոց ծխ. երկսեռ դպրոցի հոգաբարձական և մանկավարժական խուռն ժողովը որոշել է «Աղբիւրի» 25-ամեայ յօբելեանի օրը, դեկտ. 23-ին, ունենալ աշակերտական գրական առաւօտ. նիւթերը լինելու են «Աղբիւրի» հայրենիներից. աշակերտներին ծանօթութիւն կը տրվի «Աղբիւրի» կատարած դերի մասին։

✦ Մեր դպրոցները, ինչպէս երևում է, անմասն չեն մնալու «Աղբիւր» մանկական ամսագրի յօբելեանից։ Այսպէս՝ Զաքաթալայի հայոց եկ.-ծխ. դպրոցի խառն ժողովը յիշեալ յօբելեանի առիթով որոշել է՝ 1) դեկտեմբերի 21-ին տալ աշակերտական մի ներկայացում, որից ստացված արդիւնքը յատկացնել չքաւոր աշակերտների (29 հոգի) թոշակադրամին, դասական պիտոյքներին և հագնելիքին, անուանելով դրանց թոշակաւոր սաներ «Աղբիւրի» խմբագիր-հրատարակիչ Տիգրան Նազարեանի. 2) ներկայացման սկզբին բացատրել Տ. Նազարեանի գործունէութեան նշանակութիւնը և 3) յօբելեանի օրը, դեկտեմբերի 23-ին, ուղարկել շնորհաւորական հեռագիր խառն ժողովի կողմից։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Այսօր, կիրակի, լինելու է լիազօրների ընտրութիւն Թիֆլիսի քաղաքային վարկային ընկերութեան մէջ։ Ընտրութեանը կը մասնակցեն երրորդ կարգի տնատէրեր, որոնք դրաւ են դրել տներ մինչև 200,000 ռուբլու արժողութեամբ։ Հետևեալ կիրակի օրերը կընտրվեն երկրորդ և առաջին կարգերի լիազօրները։ Ցանկալի է, որ տնատէրերը, որոնք դրաւ են դրել իրանց տները քաղաքային վարկային ընկերութեան մէջ, մասնակցէին ընտրութիւններին։

✦ Երէկ, դեկտեմբերի 13-ին, Կարապետ վարդապետը Թաւրիզից ստացել է հետևեալ հեռագիրը. «Ատրպատականի հայերի կողմից ցաւակցութիւն յայտնեցէք հանգուցեալ Զոհրաբեանի ազգականներին, սիրելիներին։ Դրեցէք արծաթեայ պսակ։ Կիրակի տեղի կունենայ հանդիսաւոր հոգեհանգիստ։ Թեմական Խորհուրդ»։

✦ Վաղը, երկուշաբթի, հայ դրամատիկական խումբը ներկայացնելու է Շեքսպիրի «Համլէտը» մասնակցութեամբ տ. Սիրանոյշի, որ յատկապէս հրաւիրվել է Բագուից այդ ներկայացման համար։ Ցոյս ունենք, որ հայ հասարակութիւնը գոնէ այս անգամ կը շտապէ տեսնել իր սիրելի դերասանուհու դիպուցիկ խաղը՝ լցնելով թատրոնը։

✦ Մեզ հաղորդում են, որ շաբաթ, դեկտ. 20-ին, գերմանական կլուբի դահլիճում (Միքայէլեան փող. № 129) հայ սիրողների մասնակցութեամբ կը տրվի յօգուտ հայ գրագէտ Սեդրակ Թառայեանի մի ներկայացում։ Կը խաղան Ֆրանսուա Կօպպէի «Թագի համար» ողբերգութիւնը 5 գործ. և «Եղանատ» վոդեվիլ 1 գործ. Ա. Ղազարեանի։

✦ Ստացանք Թիֆլիսի հայոց դրամատիկական ընկերութեան հրատարակած տեղեկագիրը 1907/8 թ. թ. համար, որի մասին կը խօսենք առանձին։

✦ Կովկասի ճանիճները ցամաքեցնելու և անբերրի հողերը ոռոգելու համար 1909 թ. ընթացքում խնդրվում է 62 հազար ռուբլով աւելի գումար, քան անցեալ տարի էր։

✦ Թիֆլիսում նորերս ինչ-որ նոր լրագիր է հրատարակվել «Вечернія Новости» անունով, որի գոյութեան մասին շատ քչերը գիտէին։ Այդ լրագիրը հէնց սկզբից պոչաւոր սուտ է հաղորդել, իբր երեք օր առաջ գերել են ինժեներ Էնգիլշանին։ Իրողութիւնը ամենքին յայտնի է, որ Տ. Էնգիլշանը ազատ է և նրա վերաբերութեամբ ոչ մի «գերեվարութիւն» չէ եղել։

✦ Անցեալ օրը խուզարկութիւններ կատարվեցին քաղաքիս զանազան մասերում։ Այդ խուզարկութիւնների ժամանակ ձերբակալվեցին շատ մարդիկ, ի թիւս որոնց նաև բժ. Համօ Օհանջանեան, ուսուցիչներ Պարոնակեան և Սարգիս Մանասեան, դերասանուհի օր. Ադամեան, և այլք։

✦ Թիֆլիսից մի խումբ հայ տիկիններ դեկտ. 11-ին մի հեռագրով ողջունեցին հայաստանական կանանց համագումարի բացումը։

✦ Սենակի գաւառապետ կապիտան Միխէվիչը ծառայական գործուղումներ կատարելու համար յանձնվել է դատարանի ձեռքը։

✦ Թիֆլիսի ժամ. գեն.-նահանգապետը նոր պարտադիր որոշումներ է հրատարակել 5 կէսից բաղկացած՝ կառապանների համար։ Նրանք, որոնք 1909 թ. համար չեն ունենայ սահմանված վկայականը և դուրս կը գան աշխատանքի, կենթարկվեն մօտ 3000 ռուբլի տուգանքի կամ երեք ամսով բանտարկութեան։

✦ Ժողովրդական հաւասարան։ Այսօր, առ. ժամը 11-ին, Պուշկինեան գրադարանում (Ալէքսանդրեան այգի) Պ. Պ. Դիլէյշվիլին ռուսերէն լեզուով կը կարդայ մի դասախօսութիւն հետևեալ թեմայով. «Բանաստեղծ Ակակի Ծերեթելին իր գրուածքների մէջ»։

✦ Վաղը նշանակված է Թիֆլիսի ժողովարանի անդամների ընդհանուր ժողով։

✦ Այսօր, կիրակի, երեկոյեան ժամը 6—7-ը, կովկասեան բժշկական ընկերութեան մէջ (Դէօրգիէվսկայա փող. տ. № 4) միայն հասակաւորների համար բժ. Ն. Դ. Խատիսեանը ռուսերէն լեզուով կը կարդայ մի դասախօսութիւն՝ «Մարդու անասօմիան և ֆիզիօլոգիան» թեմայով, իսկ երեկ. ժամը 7—8-ը բժ. Վ. Դ. Դամբաշիձէն վրացերէն լեզուով կը դասախօսէ նոյն նիւթի մասին։ Դասախօսութիւնների ժամանակ ցոյց կը տրվեն մոգական պատկերներ։ Մուտքը ձրի է։

✦ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը քաղաքային լօմբարդի կառավարչից պահանջել է հատուցանել քաղաքին հասանելիք պարտքը, որ հասնում է 58,221 ռուբլի 55 կօպէկի։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

✦ Դեկտեմբերի 12-ին, առ. ժամը 11-ին, բօտանիկական սարի վրա, հին բերդի աւերակների մօտերը գտնվեց մի երիտասարդի (15—16 տարեկան) դիակ։ Քննութիւնը պարզեց, որ սպանվածը Բաշինսկի գաւ. գիւղացի Սերգէյ Բակրաձէն է։ Սպանութիւնը կատարվել է անձնական վրէժխնդրութիւնից։ Սպանութեան մէջ մեղադրվող թիւրքահպատակ Ղեռնդ Ուլուսարեանցը, 17 տարեկան, և շուշեցի Ալէքս. Աւագանը ձերբակալված են։

✦ Դեկտեմբերի 12-ին, Պօստօեալի նըրբաթաղցում, պարսկահպատակ Բաղդասար Վարդանեանը, տեղեկութիւն ստանալով Պարսկաստանից իր եղբայր Յարութիւնի մահվան մասին, ինքը դանակով վիրաւորեց իրան փորից։

✦ Դեկտեմբերի 12-ին, Խօջիվանքի գերեզմանատանը, ոմն տարճանակով ծանր վիրաւորեց Թիֆլիսեցի Պաւէլ Վօղոպանովին պարանոցից։

✦ Դեկտեմբերի 12-ին, Սուրբ-Կարապետի վերեզրում ձերբակալվեց Մարտին Հայրապետեանը, որ աքսորված էր Վեսակալի նահանգը։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԱՐՇԱԿ ՁՕՊԱՆԵԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

I

Դեկտեմբերի 11-ին, հինգշաբթի, ժողովարանի դահլիճում (Հայոց Ազգագրական Ընկերութեան հրապարակական նիստում) տեղի ունեցաւ բանաստեղծ Արշակ Չօպանեանի երկրորդ դասախօսութիւնը յատկապէս «սիրային բանաստեղծները հայոց մէջ» վերնագրով։

Դասախօսը, շնորհակալութիւն յայտնելով Հայոց Դրամատիկական Ընկերութեան և Ազգագրական Ընկերութեան վարչութիւններին առաջին և այս երկրորդ դասախօսութիւնները կազմակերպելու համար, անցաւ իր ընտրած նիւթին, այն է՝ թէ հայ ժողովուրդը իր երգիչների բերանով ինչպէս է երգել մարդկային ամենամեծ զգացմունքը, սէրը։ Սէրը, որ ստեղծագործութեան, կեանքի ոգին է, իսկապէս, որ առաջին բաղխումն է մարդու և որ կան շատ մարդիկ, որոնք կարծում են՝ թէ գեղարուեստը նոյնիսկ սիրոյ, հաճոյ լինելու զգացմունքի ծնունդն է, ուստի ընդհանրապէս կարևոր է իմանալ՝ թէ ամեն մի ժողովուրդ կամ նրա երգիչ անհատը ինչպէս է արտայայտել նրան։ Մասնաւորապէս մեզ համար կարևոր է իմանալ՝ թէ մեր ցեղը, որի վերաբերմամբ կարծում են թէ չափազանց գործնական է, շուկային, թուիչքներ չունեցող, ոչչափ ընդունակութիւն ունի այդ զգացմունքը արտայայտելու։

Այդ թռուցիկ ակնարկից յետոյ, դասախօսը բաժանեց իր նիւթը երկու մասի. նախ՝ ընդհանուր ակնարկ սիրոյ արտայայտութիւնների մասին հին գրականութեան մէջ, և ապա՝ սիրոյ երգիչները նոր գրականութեան մէջ։

Նախ քան հին գրականութեան սիրոյ երգիչներին դիմելը, դասախօսը կանգ առաւ ժողովրդական աշուղական երգերի վրա, մատնանշելով նրանց բնորոշ կողմը, որ նրանք առհասարակ հեռու են գռեհկութիւնից, զգացմունք շատ են պարունակում, քնքշալից են ու խանդաղատանքով ինչպէս Կոմիտասի կազմած «Հով արէք, սարեր Ջան» արարատեան ժողովրդական երգերից, Վանի ժողովրդական երգերը, որոնք լի են սիրոյ զգացմունքով, սիրոյ ցաւերով, այլազան իմաստներով ու երգիծաբանական բանաստեղծութեամբ լի (այր ու կին)։ Ակնի երգերը ևս յայտնի են (Թիւրքիայում) և բացարձակապէս ազգային գոյն ունեն. նրանց մէջ կան փոքրիկ կտորներ քնարերգական բովանդակութեամբ, որոնք ամբողջ գործողութիւն են պատկերացնում (Պանդըխտի երգը)։ Բայց այդ կարգի բանաստեղծութիւնների մէջ ամենից նշանաւորն է «Աղբիւր մը», որ մի սիրուն բալլադա է։

Ժողովրդական, աշուղական երգերի մասին այդ փոքրիկ դիտողութիւնը անելով, դասախօսը վերադարձաւ հին գրականութեան, շեշտելով որ նրա մէջ դժուար թէ կարելի լինի նկատել սիրոյ զգացմունքի երգեր, որովհետև մատենագիրները եղել են գլխաւորապէս հոգևորականներ, որոնք գրել են իրանց հոգու փրկութեան համար կամ գրել են միայն վարդապետական բովանդակութեամբ։ Սակայն յետագայում արդէն, սկսած 13-դ և 14-դ դարի սկիզբներից, նրանք ազդվում են ժողովրդական երգերից, և սիրոյ քերթուածները մուտք են գործում գրականութեան մէջ, որովհետև մատենագիր հոգևորականները սկսում են արդէն գրել ժողովրդի համար և յարմարվել նրա ճաշակին ու ժամանակակից պահանջներին, (օրինակ. «Անձ գեղեցիկ», «Դիւանաճանութիւնը»—ծաղիկները վարդի դէմ—որտեղ երգվում են ամենավեհ ու բարձր ներշնչումով սէրը, խանդը, յափշտակութիւնը, իդէալականացրած սէրը)։ Սակայն մեր հին աշուղական, ժողովրդական երգիչներից Նահապետ Քուչակն է ամենավառ սիրոյ երգիչը, որին կարելի է համեմատել Հաֆիզի ու Սադիի հետ։ Այս վերջին երկուսը պերճաբանում են, հեշտական միայն, բայց Քուչակը խոր զգացված, անկեղծ, մաքուր, դաղափարներով ու նմանութիւններով պատկերաւոր. նրա սիրոյ երգերը մի ամբողջ վէպ կարելի է համարել, որի մէջ զետեղված է նրա սիրոյ սիրաը։ Նրա սիրոյ երգերի մէջ ուշագրաւ է՝ «Սէրը երբ աշխարհ եկաւ», «Ես աչք և դուն լոյս, հոգիս», «Ես մեռնեմ», որի մէջ կայ մի ամբողջ բօժանդակ նոր իմաստով, «Աչքերս», որի մէջ ամփոփված է մի հին հեքիաթ և խօսում է սիրոյ մասին, և այլն։

Դրանով էլ վերջացաւ դասախօսութեան առաջին մասը։

Լ. Դ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 13 դեկտեմբերի

«Մշակի» անցեալ օրվայ համարում ծանուցված էին այն խոշոր նուիրաբերութիւնները, որ իր կտակով արել է նորոգ հանգուցեալ Գ. Զոհրաբեանը։ Միացնելով մեր ձայնը պ. Հ. Ա.-ին՝ կը հրաւիրենք յատկապէս քաղաքումս ապրող պարսկահայերին, որոնց հայրենի երկիրն ամենից աւելի բարերարված է հանգուցեալի կողմից և որոնց համար աւելի պարզ պէտք է լինի նրա փառաւոր կտակի արժէքը, ասենք 14-ին, նրա թաղման օրը, նրա դագաղի շուրջը խմբվել և վայել յարգանքը մատուցանել նրա բաց շիրմի առաջ։

Կարապետ Ծ. վարդ.

—

*Թիֆլիս, 11 դեկտեմբերի *)*

«Մշակի» 269-րդ համարում կարդալով

*) Ծանօթ. Խմբ.—Տպագրելով պ. Արտեմիսի նամակը, խմբագրութիւնս ցանկութիւն է յայտնում, որ այդ վէճը կրճատվի և յաճենանդ դէպս այնպիսի ձևով առաջ տարվի, որ մենք հնարաւորութիւն ունենանք տպագրելու ուղարկված նամակները։ Մեզ ուղարկվում են այնպիսի նիւթեր, որոնք անյարմար են լինում տպագրութեան համար։

պ. Ս. Գարագաշի Բագուից գրված թղթակցութիւնը ակամայից յիշեցի ըստ «Amicus Plato, sed magis amica veritas» առածը և չը նայելով որ «ընկեր» Գարագաշը «բարեկամս է», այսուամենայնիւ ստիպված եմ սոյն երկտողովս հերքել նրա գրածները, որովհետև նրանից լաւ բարեկամ՝ ճշմարտութիւնն է։

Ապշեցուցիչ է այն հանգամանքը, որ թղթակից պարոնը շատ լաւ ծանօթ լինելով Դոլուխանովի և Հնչակեան ս.-դ. կուսակցութեան միջև տեղի ունեցած կօնֆլիկտի և նրա շարժառիթների հետ՝ այսուամենայնիւ ներկայանում է, որպէս մի inoxia corpora—անժեղ մարմին, գործից միանգամայն անտեղեակ մէկը, և առանց ամաչելու ու ստախօսութեան համար հասարակական պատասխանատուութիւնից վախենալու, թոյլ է տալիս իբրև ընթերցող հասարակութիւնը մոլորեցնելու նպատակով, մտքեր պղտորել և փաստերը խեղաթիւրել։

Շատ քաջ ծանօթ լինելով նրա բարոյական պակերի և այն շարժառիթների հետ, որոնցից դրդված նա ստախօսում է, սրանով յայտարարում եմ ի գիտութիւն հասարակութեան, որ թռուցիկը բաց է թողնված Բագուի և Բալախանիի մասնաճիւղերի կողմից պաշտօնապէս։ Իսկ ինչ վերաբերում է «հայհոյանքներին և թռուցիկի հայերէն չը լինելուն», ասում եմ, որ նրանում չը կայ և ոչ մի հայհոյանք, այլ միայն իբրև օրինակ բերված է Կրիլովի «Փղի և քոթոթի» առակը, որը չէ կարելի հայհոյանք համարել. թռուցիկի հայերէն լինելու կամ չը լինելու գնահատութիւնը ըստ իս պ. Գարագաշի հակացողութիւնից վեր է, որովհետև ժամագործները չեն այն հայագէտները, որոնք մեզ հայերէնի դասեր պիտի տան։ Ne sutor supra crepidam—կօշկակար, կօշկիդ բարձր մի քննադատիր։

Արտէմիս

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺԻՇԿ
Գ. Ե. Խօջափարուխեան
Օդեսայի համալսարանի կլինիկայի նախկին ասսիստենտ. փոխադրվել է Թիֆլիս։ Մասնագիտութիւնը՝ սիֆիլիս, միզասեռական և կաշուի հիւանդութիւններ։ Ընդունելութիւնը՝ առաւօտեան ժամը 9—11 և 5—7½ երեկոյեան։ Կանանց և երեխաների համար—ժամը 11-ից մինչև 12-ը ցերեկվայ։
Սօլոլակ, Բէբուտովսկայա փ. № 29, սեփ. տ.
(օ. մ.) 25—7

ԱՏԱՄՆԱԲՈՑԺ
Յ. Մ. ԿԷՕՆՃԵԱՆ
Ընդունում է բերանի և ատամի հիւանդութիւններ ունեցողներին։ Շինում է ոսկու, արծաթեայ, ֆարֆորի և այլ տեսակ պլօմբներ։ Արհեստական ատամներ ոսկու և կաուչուկի վրա։ Կաբինետին կից արհեստական ատամների լաբորատորիա։ Խորհուրդը ձրի։
Ընդունելութիւն { 9—2 ժ. առաւօտեան / 4—7 ժ. երեկոյեան
Шелковниковская ул., № 8, ոչ հեռու Աբաս-Աբադկայա հրապարակից։
(շ. կ. չ.) 25—12

ԲԺԻՇԿ
Ա. Մ. ԱՄԻՐԽԱՆԵԱՆ
Ներքին հիւանդութիւններ
Ընդունելութիւն ամեն օր { 11—12 ժ. առաւ. / 5—6 ժ. երեկ.
Վելիամինովսկայա փող., № 10.
(օ. մ.) 100—28

ԲԺԻՇԿ
Ա. Ա. ԽԱՆԴԱՄԻՐԵԱՆ
Ներքին եւ ջղային հիւանդութիւններ, առանձնապէս սրտի և թոքերի հիւանդութիւններ։ Ընդունելութիւնը՝ 11—1 ժ. առաւօտեան, 5—6 ժ. երեկոյեան։
Սօլոլակսկայա փ. № 6. տ. Միրզոյեվի
(օ. մ.) 50—13

Հայոց թատրոն
ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԼՈՒԲԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ
Միքայէլեան փողոց 129
Շաբաթ, դեկտեմբերի 20-ին
Հայ դրամատիկ նորակազմ սիրողների խումբը
կը ներկայացնէ
I
Թագի համար
Ողբերգ. 5 գործ. հեղ. Կօպպէի, թարգմ. Մ. Մանուչարեանի
II
ԵԱԴ-ԱՍՏ
Վօդ. 1 գործ. հեղ. Ղազարեանի
Մասնակցում է ամբողջ խումբը
Սկիզբն է երեկոյեան ժամը 7½-ին
Տեղերի գներն են 2 ր.—25 կ.
Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ «Մշակի» խմբագրատանը և Թառայեանի գրախանութում, իսկ ներկայացման օրը թատրոնի կասսայում՝ առաւօտեան ժամը 10-ից մինչև 2-ը, իսկ երեկոյեան 4-ից մինչև 8-ը։
Կարգադրիչ՝ Տ. Մուրադեան

ՀՐԱՒԷՐ
Կիրակի, հոկտեմբերի 14-ին
Թանդոյեան եկեղեցում
տեղի կունենայ
ծխական ժողովի շարունակութիւնը։
Զբաղմունքի նիւթերն են՝ վերատուգիչ յանձնաժողովի զեկուցումը և եկեղեցուն ու դպրոցին վերաբերեալ այլ հարցեր։
Ժողովի սկիզբն է ժամը 12-ին։ Հրաւիրւում են յարգելի ծխականները ներկայ լինելու. ժողովին։
2—2

Մեդիցինայի ՔԷԼՂԷՐ-մասսաժիստ
Յ. Գ. Եսայեան
Կաշուի տակ սրսկում է բժիշկների նշանակած դեղեր, օր. մկնդեղ՝ ուժասպառութեան և սակաւարիւնութեան դէմ, և այլն։ Խնամում և փաթաթում է վէրքեր։ Սեռական անկարողութեան, թուլութեան և ընդհանուր ջղայնութեան դէմ անում է համապատասխան սառնադի շփումներ, տրորումներ ամբողջ մարմնի։ Ընդհանուր և տեղական մասսաժ։ Մասնագիտական մասսաժ փորկապութեան, չաղութեան, նիհարման, ջղայնութեան, սեռական թուլութեան և այլ հիւանդութիւնների դէմ։ Բժշկական ու շվեդական գիմնաստիկա կազդուրվելու համար։ Ընդունում է հրաւէրներ հիւանդների մօտ։ Զբաւորներին մեծ զիջողութեամբ։ Ժամանակաւոր. հասցէն՝ պօստի մօտ, Բարօնսկայա փող. № 15։ Ընդունելութիւնը՝ կանանց 3—4. ժ., տղամարդկանց՝ 4—5 ժ.։
(օ. ժ.) 50—5

Առաջիկայ կիրակի, դեկտեմբերի 14-ին, ցերեկվայ ժամը 12-ին, Մողնու ս. Գէորգ եկեղեցում նշանակված է ծխականների վերջնական ընդհանուր ժողով, որ կը կայանայ քանի ծխականներ և ներկայ լինեն. ժողովի պարապմունքի առարկաները լինելու են՝ 1) քննութիւն հաշուի ծխական հոգաբարձութեան Գայիանեան դպրոցի 1907 և 1908 տարվայ համար, 2) քննութիւն նախահաշուի 1908 և 1909 թ. համար, 3) ընտրութիւն չորս հոգաբարձուների և 4) զեկուցումներ վերատուգող յանձնաժողովի։
Սիմէօն ա.-ք. Զմշկեան
Երէցփոխ՝ Բ. Տէր-Յակոբեան
(ու. կ.) 2—2

Նոր լոյս տեսաւ
Ղուկասեան Մատենադարան
№ 2.
ՂԱՋԱՐ ՓԱՐՊԵՏԻ
(458 էջ, ընտիր թուղթ և տպագրութիւն)
Գինն է 30 կ.
Փառակազմը 60 կ.
Դիմել Թիֆլիսի գրավաճառներին։
Նոյն տեղերը ծախվում է նաև
ԵՂԻՇԷ
(296 էջ, նոյնպիսի թուղթ և տպագրութիւն)
Գինն է 20 կ.
Փառակազմը 50 կ.
5—1

ԲԺԻՇԿ
Գ. ՄԱՂԱԲԵԱՆ
Թոռախտի բժշկութիւնը
Նոր տուբերկուլիններով (շիճուկով)
Ընդուն. ժամերը { 12—1 ժ. / 5—6 ժ.
Միքայէլեան փող. 36.
(օ. մ.) 5—1

ՆՈՐ ԲՈՅՎԵՑ
Թիֆլիսի մասնաւոր հիւանդանոց
(ամբուլատորային ընդունելութիւն)
եկող հիւանդների համար ամեն օր, Վօկզալնայա 8, տ. Էնֆիաճեանցի
Տելեֆոն 695
Ե. Դ. ՖԷՏՕՐՕՎ ամեն օր, բացի չորեքշաբթի և կիրակի օրերից, 8½-ից մինչև 9½, ներքին հիւանդ.։
Վ. Դ. ԴԱՄԲԱՇԻՋԷ ամեն օր, բացի կիրակի օրերից, 11—12 ժամը, ներքին և երեխաների։
Բ. Ա. ՊՕՊՕՎ երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ 12—1 ժամը, կոկորդի, քթի և ականջի։
Գ. Մ. ՄԱԿԱՐՕՎ երեքշաբթի և ուրբաթ օրերը 12—1 ժ., ներքին։
Ա. Ն. ԴԻԱՍԱՄԻՋԷ ամեն օր, 11½-ից մինչև 12½ ժ., սիֆիլիս և կաշուէ հիւանդութիւններ։
Ն. Մ. ՄԷԼԻՐՕՎ ամեն օր, խիրուրգիական և կանանց հ. 1—2 ժամը։
Ի. Դ. ԳՕՄԱՐԹԷԼԻ ամեն օր, ներքին և երեխաների, 2—3 ժամը։
Բ. Ս. ՄՈՒՍԽԷԼՕՎ ամեն օր, բացի կիրակի օրերից., 2—2½ ժ., աչքի հ.։
Հիւանդանոցում կատարվում են միկրոսկոպիական, բակտէրիօլոգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկի պատուաստում և ծծմայրերի քննութիւն, Վճար խորհրդի համար 50 կոպէկ։
Օպէրացիաները և խորհրդատուութիւնը ըստ համաձայնութեան։
Շուտով բացվելու է ստացիոնարական բաժանմունք 30 մահճակալներով։
(կ. չ. ու.) 5—1

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ
պատգամաւորների
խմբակարը
(1908 թ. նոյեմբերի 1-ին)
Աւտոտիպ ՊՕՍՏ-ԿԱՐՏ
100 հատը 2 ր. 50 կ., հատը՝ 5 կոպ.
Դիմել՝ Фото-цинког. С. Согомоняна, Базарная 20, Тифлисъ.
(ե. հ. կ.) 5—4

ԴԵՐԲԵՆՏՈՒՄ, քաղաքի կենտրոնում վաճառվում է ԵՐԿՅԱՐԿԱՆԻ ՄԻ ՏՈՒՆ՝ նկուղով, 360 քառ. սաժէն տարածութիւն ունեցող հողի վրա, երեք կողմից խիտ անցուդարձ ունեցող փողոցներով։
Նոյնպէս վաճառվում է քաղաքից հինգ վերստ հեռաւորութեան վրա գտնվող ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻ, հերթական բաժին ունեցող ջրով, ութ դեսեատին տարածութեամբ, քաղաքային երկյարկանի տնով և ջրհորով։
Այդ կալուածքները պատկանում են հանգուցեալ Եկատերինա Մելիք-Ղանդարեան դէ-Ղապուրին։
Գնել ցանկացողները կարող են դիմել կտակակատարներին Դերբենտում—Կարապետ Ա. Օրբելովին և Յովհաննէս Գ. Իսաղուլեանցին։
(կ.) 9—7

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ
ՀԱՇԻՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների մինիստրութեան ուսումնարանական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում։
ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ անձանց, գործնական ձևով հաշուապահութիւն և ուրիշ մասնագ. առարկ.
Ներկայ տարվայ կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաներից աւանդվելու է ձրիաբար քաղաքական տնտեսութիւն (политическая экономія) և որոշ վճարով կամաւոր սղագրութիւն (стенографія)։
Ընդունելութիւնն ամեն օր, ժամը 4-ից մինչև 7-ը երեկոյեան, 9-ից մինչև 10-ը առաւօտեան։ Պարապմունքներն սկսվելու են 1909 թ. յունվ. 15-ից, պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ։ Ծրագիրը ուղարկվում է ձրի։
Դասընթացքը աւարտողներին տրվում են, ֆինանսների մինիստրութեան թոյլատրած ծրագրի համաձայն, ատտեստատներ։
Դրանից անկախ՝ բացված է քիչ պատրաստականութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թուաբանութեան համար։
Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում. Н. В. Абраамяну, Николаевская ул. № 22, ամենայն օր։
Վերևում յիշած ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ Գինն է 3 ր. 50 կոպէկ։
(կ. ե. հ.) 15—2

ՄԵՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԷ
բերել տալ միայն մշտական օրացոյց ունեցող ժամացոյց։
Ամեն մի մարդու քիչ չի լինի պատահած, երբ նա հարկաւոր մօմենտում դժուարացել է իմանալ՝ թէ որ օրն է և ամսի քանիսը։ Քիչ կորուստ չէ եղել հէնց նրանից, որ անկարելի է եղել ստոյգ որոշել ամսաթիւը։ Դրա համար էլ իւրաքանչիւրին անհրաժեշտ պահանջ պիտի զգացվի ունենալ այնպիսի ժամացոյց, որը շարունակ կարողանայ ճշգրիտ կերպով ցոյց տալ հարկաւոր ժամանակաշրջանը։ Ես պայմանաւորվել եմ ժամացոյց-օրացոյց պատրաստող շվեյցարական խոշորագոյն ֆաբրիկաներից մէկի հետ և կարողանում եմ ուղարկել այդ տեսակ ժամացոյց չը տեսնված գնով, միայն
4 ռուբլի 50 կոպէկով. 2 հատը—8 ռուբլի 50 կոպէկ։
Այդ ժամացոյցը իսկական «Անկեր» է, ընթացքը 15 քարի վրա, սև պողպատից, լարելը 40 ժամը մի անգամ, մեսաղէ ցիֆերբլատով, աւտոմատիկ կերպով ցոյց է տալիս օրը, ամսաթիւը և ամիսը։ Ճանապարհածախքը 1—4 ժամացոյցի համար 40 կոպ., Սիբիր—75 կ.։ Նորաձև ոսկուց կարճ շղթայ՝ բրելօկով—75 կ. և 1 ր. 50 կ., երկար շղթայ—2 ր. 50 կ. և 3 ր. 50 կ.։ Ուղարկումը վերադիր վճարով և առանց կանխավճարի։
Հասցէ. Единств. П ред. И. ШТРУМФЕЛЬДЪ, Варшава, Св. Креста № 48.
Թղթակցութիւնները ռուսերէն և գերմաներէն լեզուներով։
(20, 23, 27, 2, 6, 10, 14) 7—7

Открыта подписка на 1909 г. на двухнедѣльный журналъ (4-й годъ изданія).
„ЯСНАЯ ПОЛЯНА“
Съ прилож. 24 книгъ и 48 выпуск. Народный Университетъ и Исторія Революціи.
Въ журналѣ печатаются издававшіеся заграницею журналы освободит. движенія.
„БЫЛОЕ“, „ИСКРА“ и „КОЛОКОЛЪ“ А. Герцена.
Помѣщаются произведенія Льва Николаевича Толстого и Народный Университетъ, въ которомъ примутъ участіе: К. И. Арабажинъ, проф. К. Жаковъ, проф. Перецъ, Д-ръ филос. Гр. Полонскій и др.
24 КНИГИ ПРИЛОЖ. СЛѢДУЮЩАГО СОДЕРЖАНІЯ:
4 КНИГИ полнаго собранія соч. ИММАНУИЛА КАНТА, переводъ по тексту, изданія Дюрра въ Лейпцигѣ подъ редакціею профессора Карла Форлендера.
4 Кн. «Библіотека Знанія» сочиненій проф. Виндельбанда. Гефдинга, Риля и др., въ образц. перев. подъ ред. и вступ. статьями доктора фил. Г. Полонскаго и проф. К. Жакова.
1 Кн. Разсказъ о семи повѣшенныхъ, ЛЕОНИДА АНДРЕЕВА, съ портр. біогр. и вступит. статьею проф. К. Жакова.
4 книги «Художественныя сокровища всѣхъ странъ и народовъ» (картины съ объяснительнымъ текстомъ).
4 книги «КРУГЪ ЧТЕНІЯ»—мысли мудрыхъ людей, собранная Гр. Л. Н. Толстымъ.
4 книги Сборникъ сочиненій бывшихъ до сихъ поръ подъ запретомъ въ Россіи.
3 книги ИСТОРІИ РОССІИ.
Подписная цѣна на годъ съ пересылкою 7 р. Допускается разсрочка: при подпискѣ 3 р. и къ Пасхѣ и въ іюнѣ 1909 г. по 2 р. Вышли 3 №№ съ тремя выпусками Народнаго Университета и Истсріи революціи. Остальные—1 и 15 числа каждаго мѣсяца: Требованія адресовать: С.-Петербургъ, Лѣсной Корпусъ, Книгоиздательство «Ясная Поляна».
Тамъ же принимается подписка на новое изданіе 16 частей полнаго
соб. соч. граф. Л. Н. ТОЛСТОГО
до сихъ поръ печатавш. за границей. Цѣна съ пересылкою 8 р. Допускается разсрочка: при подпискѣ 4 р. и къ Пасхѣ 1909 г. 4 р. Желающіе болѣе ширвкой разсрочки платятъ за каждыя 2 части по 1 р. (наложен. платъ. 20 к.). Вышло 12 частей. Уплачивающіе единовременно 8 р. получатъ всѣ 16 частей въ 4 англ. коленкора переплетахъ съ тисненіемъ золотомъ (по 4 части въ каждомъ).
(14, 25, 6) 182150. 3—1

„ՊՐՕՎՕԴՆԻԿ“
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՐԻԳԱՅՈՒՄ
ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ՊԱՀԵՍՏ ԹԻՖԼԻՍՈՒՄ
Սօլոլակսկայա փող., № 4.
ՖԱԲՐԻԿ ПРОВОДНИКЪ ЗАКЛЕЙМО ՊՐՕՎՕԴՆԻԿ ՌԻԳԱ 1888
Առաջարկում է մեծաքանակ եւ հատով
Կառքերի համար բէզինի շիներ.
Աւտոմոբիլների համար պնէվմատիկ շիներ «ԱԼՄԱԶ» (կարմիր).
Վելոսիպեդների համար պնէվմատիկ շիներ.
Աւտոմոբիլ-օմնիբուսների համար խիտ-բէզինի շիներ.
«ՊՐՕՎՕԴՆԻԿ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ արդիւնաբերած շիները երկար տարիների ընթացքում ճանաչված են իբրև առաջնակարգ և բարձր են կանգնած արտասահմանեան ամենալաւ ֆաբրիկաների շիներից, որի համար վկայում է ոչ միայն նրանց վերաբերմամբ եղած խոշոր պահանջը Ռուսաստանի սահմաններում, այլ և գլխաւորաբար մեծ քանակութեամբ արտասահման արտահանելը։
Հատուկ ճաշակ աշխարհի ամենայաւ
ԿՐԿՆԱԿՕՃԻԿՆԵՐԻ „ՊՐՕՎՕԴՆԻԿ“
(№ 3) 25—5

Электропечатня Н. Г. Аганьянцъ
Полицейская. 7.